



■ Արտաքին գործոց նախարարը կը մեկնաբանէ Վիեննայի հանդիպման արդիւնքները

Վիեննայի խորհրդատուութեան վերադառնալէ ետք, Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Արքատի Ղուկասեան մամլոյ ասուլիս մը տուաւ, որու ընթացքին հանդամանօրէն վերլուծեց նոյեմբեր 2 - 8 տեղի ունեցած խորհրդակցութեան արդիւնքները:

Մինչեւ խորհրդակցութեան մասին խօսիլը, արտաքին գործոց նախարարը նշեց, որ այդ խորհրդատուութեան ասուլիս ղարաբաղեան հակամարտութիւնը քննարկող Փարիզի ժողովի ընթացքին ընդունուած էր «անյապաղ միջոցառումներու ժամանակացոյց» մը եւս, որ այնքան ալ ընդունելի չեղաւ Ատրպէյճանի համար:

Ատոր յաջորդեց թիւ 884 բանաձեւը, որ կարծես Ատրպէյճանի «սրտէն բխած» ըլլար, կամ՝ անոր թելադրանքով եւ ցանկութեամբ գրուած:

Այս երկու ոչ այնքան իրերամերժ փաստաթուղթերէն ետք Վիեննայի մէջ կայացած ժողովը, որու «ժամանակացոյցը» դեռ չէ ուղարկուած հակամարտ կողմերուն, հակամարտութեան խաղաղ կարգաւորման նոր ուղիներ կը մատնանչէ, որ այս անգամ ընդունելի չէ ղարաբաղեան կողմի համար: Ի հարկէ, ըստ արտաքին գործոց նախարարին, այնտեղ ղարաբաղեան կողմը յստակ եւ որոշ առաջարկներ ըրած է: Այս բոլորէն ետք անշուշտ ԵԱՀԽը եւ անոր ծիրէն ներս գործող Մինսկի խումբը աւելի յստակ եւ կոշտ ձեւով յայտնած են, որ մինչեւ նոյեմբեր 22 պէտք է տրուի հերթական ժամանակացոյցի պատասխանը, ըստ որուն՝ 5 չրջաններէն՝ Ֆիզուլի, Աղղամ, Ղուպաթլի, ձեպրայիլ եւ Քելբաջար, պէտք է դուրս բերուին ղարաբաղեան զօրամիաւորումները:

Ապա արտաքին գործոց նախարարը խօսեցաւ Իննետակի մէջ թուրքիոյ միջնորդական առաքելութեան «անկողմնակալութեան» մասին, որ ցայտուն կերպով երեւցած է անոր ներկայացուցիչ ձհանտան Նազիի ելոյթներէն եւ միջամտութիւններէն:

Վերջաւորութեան, արտաքին գործոց նախարարը պատասխանեց լրագրողներու հարցումներուն:



■ Ոստիկանութեան «օր»ը

Ստեփանակերտի մէջ հանդիսաւոր կերպով նշուեցաւ «ոստիկանութեան օր»ը: Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան ոստիկանութեան աշխատակիցներուն իրենց շնորհաւորութիւնները հաղորդեցին «Մայրութիւն» հիմնադրամի ներկայացուցիչները:

Հիմնադրամի նախագահ Հ. Միքայէլեան ոստիկանութեան շարք մը աշխատակիցներու, որոնք աշխատանքային պարտականութիւններէն զատ մարտնչած են նաեւ հայրենիքի ազատագրութեան դիրքերու վրայ, շնորհեց «Մայրական երախտագիտութիւն Արցախի քաջորդիներին» յուշամետալը:

Ի թիւս այլոց, այդ յուշամետալով յետ մահու պարգեւատրուեցան ոստիկանութեան հրամանատար Վատիմիր Նասիպեան, ոստիկանութեան աշխատակիցներ Եուրի Քարամեան եւ Հմայեակ Ծատրեան: